ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 21-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 22

ՕՐԱԿԱՐԳ

1. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության 2016 թվականի տարեկան ծրագրի մասին

/զեկուցող՝ ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության հաշմանդամների հիմնահարցերի բաժնի պետ Ա.Հակոբյան /

2. Սոցիալական ձեռնարկությունների իրավական կարգավիճակի հստակեցման նպատակով իրականացված աշխատանքների մասին

/զեկուցող՝ ԱՄՆ ՄԶԳ կենսաթոշակային քաղաքականության թիմի ղեկավար, աշխատանքային խմբի ղեկավար Ա. Մանուկյան/

3. Տեղեկատվություն բժշկասոցիալական փորձաքննության գործընթացում Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման մոտեցումների ներդրման ուղղությամբ իրականացվող աշխատանքների մասին

/զեկուցող՝ ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության հաշմանդամների հիմնահարցերի բաժնի պետ Ա.Հակոբյան/

4. <<Հայաստանի Հանրապետությունում 2016 թվականը հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորությունների տարի հայտարարելու և հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորությունների տարվա կապակցությամբ անցկացվող միջոցառումների ցանկը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծի մասին

/զեկուցող՝ ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության պետ Ա.Կեսոյան/

5. Այլ հարցեր

Մասնակցեցին՝

Ա. Ասատրյան՝	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի նախագահ

Հանձնաժողովի անդամներ՝

Ջ.Բաղդասարյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Ա.Ալավերդյան	<<Հատուկ կարիքներով մարդկանց աջակցության <<ՈՒՆիսոն>> հասարակական կազմակերպության նախագահ
Ա.Մկրտչյան	<<Սկարպ>> առողջական կենտրոն հասարակական կազմակերպության նախագահ
Ս.Մաղաքյան	<<Լիարժեք կյանք>> հասարակական կազմակերպության նախագահ
Գ.Գրիգորյան	<<Հայաստանի խուլերի միավորում>> հասարակական կազմակերպության նախագահ
Հ.Աբրահամյան	Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միության նախագահ
Ա.Կեսոյան	ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հացերի նախարարության աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության պետ (հանձնաժողովի քարտուղար)

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի անդամների առաջարկությամբ նիստին մասնակցել են՝

Ժ.Ասատրյան	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի բյուջետային և առողջապահական բնագավառներում բյուջետային ընթացիկ ծախսերի ծրագրավորման վարչության պետի իրավախորհրդատու (նախարարի առաջին տեղակալ Պ.Սաֆարյանի առաջարկով)

Գ. Սարգսյանը ՀՀ ԱՆ Բժշկական օգնության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ (նախարարի տեղակալ Վ.Պողոսյանի առաջարկով)

Ա.Մուրադյան ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի հանրակրթության վարչության նախադպրոցական և միջին կրթության բաժնի գլխավոր մասնագետ (նախարարի տեղակալ Մ.Մկրտչյանի առաջարկով)

Հ.Գալստյան ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի տարածքային կառավարման և զարգացման վարչության պետ (նախարարի առաջին տեղակալ Վ. Տերտերյանի առաջարկով)

Լ.Ղազարյան ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի համակարգի իրավական ապահովման վարչության պետի տեղակալ (նախարարության աշխատակազմի համակարգի իրավական ապահովման վարչության պետ Ն.Բալայանի առաջարկով)

Մ.Սարգսյան <<Հայաստանի կույրերի միավորում>> հասարակական կազմակերպության նախագահի տեղակալ (նախագահ Ա.Հակոբյանի առաջարկով)

Հրավիրվածներ՝

Ա. Արսենյան ՀՀ կապի և տրանսպորտի նախարարի տեղակալ

Ն. Մանուկյան ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի ճարտարապետությանվարչության քաղաքաշինական հատուկ կարգավորման օբյեկտների համակարգման բաժնի պետ

Մ. Ներսիսյան ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմի մասսայական սպորտի և ֆիզիկական դաստիարակության քաղաքականության վարչություն ֆիզիկական դաստիարակության քաղաքականության բաժնի կրտսեր մասնագետ

Ռ. Ղլեչյան ՀՀ մշակույթի նախարարության աշխատակզմի

	մշակութային ծրագրերի և մոնիթորինգի վարչության գլխավոր մասնագետ
Վ. Դավթյան	ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի նախագահ
Լ.Մուրադյան	ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի նախագահ
Ա. Մուրադյան	ՀՀ Արարատի մարզպետի տեղակալ Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի նախագահ
Ն.Մովսիսյան	ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ
Հ. Դավթյան	Երևանի քաղաքապետարանի սոցիալական ապահովության վարչության առաջատար մասնագետ, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Երևան քաղաքի հանձնաժողովի քարտուղար
Ա. Պողոսյան	ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ
Վ. Ջաղինյան	ՀՀ Լոռու մարզպետարանի մարզպետարանի սոցիալական ապահովության բաժնի պետ, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի քարտուղար
Ն. Ճաղարյան	ՀՀ Տավուշի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության գլխավոր մասնագետ, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի քարտուղար
Կ. Հարությունյան	ՀՀ Կոտայքի մարզպետարանի սոցիալական ապահովության բաժնի գլխավոր մասնագետ
Գ. Կարապետյան	ՀՀ Շիրակի մարզպետարանի սոցիալական ապահովության բաժնի գլխավոր մասնագետ

Ց. Բաբայան	ՀՀ Վայոց Ձորի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առաջատար մասնագետ, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի քարտուղար
Ժ. Դադասյան	ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի նախագահի տեղակալ
Ա. Սողոյան	ՀՀ ԱՍՀՆ ՀՀ ԲՍՓ գործակալության պետ
Ա. Մանգասարյան	ՀՀ ԱՍՀՆ Զբաղվածության պետական գործակալության պետ
Մ. Մալխասյան	ՄԱԿ-ի զարգացման ծրագիր (UNDP)
Մ. Պողոսյան	ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ (UNICEF)
Հ. Ղուկասյան	ԱՄՆ ՄԶԳ ԿԲԻԾ
Ա Մանուկյան	ԱՄՆ ՄԶԳ ԿԲԻԾ
Ջ. Սարգիզովա	«Սեյվ դը Չիլդրեն» միջազգային կազմակերպության ներկայացուցիչ, «LIFE» ծրագրի տնօրեն
Զ. Բաթոյան	«Հաշմանդամություն ունեցող անձանց շահերի պաշտպանության ազգային դաշինք» իրավաբանական անձնաց միության նախագահ
Հ. Հունանյան	«Սատար» հաշմանդամների հասարակական կազմակերպության նախագահ
Ա. Աբրահամյան	«Փրկություն» հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոնի ղեկավար
Ա. Մարտիրոսյան	ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի վարչության պետ
Լ. Հայրապետյան	ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի ընտանիքի կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության երեխաների հիմնահարցերի բաժնի պետ
Ա. Դանիելյան	ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի պետ

Ա. Հակոբյան	ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության հաշմանդամների հիմնահարցերի բաժնի պետ
Ռ. Եգանյան	ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության, հաշմանդամների հիմնահարցերի բաժնի գլխավոր մասնագետ
Ա. Հայրապետյան	ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության, հաշմանդամների հիմնահարցերի բաժնի գլխավոր մասնագետ
Հ. Մկրտչյան	ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության, հաշմանդամների հիմնահարցերի բաժնի առաջատար մասնագետ

Ս.թ. հուլիսի 21-ին տեղի ունեցավ Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի /այսուհետ Հանձնաժողով/ հերթական նիստը, որը վարում էր Հանձնաժողովի նախագահ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար պարոն Ա. Ասատրյանը:

Ողջունելով Հանձնաժողովի անդամներին և հրավիրված անձանց՝ Հանձնաժողովի նախագահ պարոն Ասատրյանը առաջարկեց հաստատել օրակարգը:

Հանձնաժողովի անդամ <<Ունիսոն >> ՀԿ-ի նախագահ պարոն Ա. Ալավերդյանն առաջարկեց օրակարգում ավելացնել Այլ հարցերը՝ որպես 5-րդ կետ:

Պարոն Ա. Ասատրյանը առաջարկեց հաստատել օրակարգը՝ ներառյալ նաև այլ հարցեր քննարկելու հնարավորությունը, և կարևորեց օրակարգում ընդգրկված հարցերից յուրաքանչյուրը՝ հատկապես նշելով 1–ին օրակարգային հարցը, որը վերաբերում էր Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության 2016 թվականի տարեկան ծրագրին: Պարոն Ա.Ասատրյանը նշեց նաև, որ նախորդ տարիների Հանձնաժողովի անդամներն առաջարկել էին յուրաքանչյուր տարվա տարեկան ծրագիրը պատշաճ կերպով քննարկել Հանձնաժողովի նիստի ընթացքում և միայն դրանից հետո այն ներկայացնել ՀՀ կառավարություն: Նա ավելացրեց, որ այդ առաջարկությունը հաշվի է առնվել և եթե նիստի ընթացքում կլինեն առաջարկություններ և դիտարկումներ, ապա դրանք անպայման հաշվի կառնվեն 2016 թվականի տարեկան ծրագրի կազմման ընթացքում:

Պարոն Ա.Ասատրյանը կարևորեց նաև 2016 թվականը Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորությունների տարի հայտարարելու և հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորությունների տարվա կապակցությամբ անցկացվող միջոցառումների ցանկը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Նա նշեց, որ 2016 թվականը Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորությունների տարի հայտարարելու հետ կապված հանձնարարականը տրված է ՀՀ վարչապետի մոտ կայացած Հանձնաժողովի նախորդ նիստի ընթացքում, որտեղ կարևորվում է նաև 2016 թվականին այնպիսի միջոցառումների անցկացումը, որոնք թույլ կտան էական տեղաշարժ գրանցել հաշմանդամության ոլորտում: Պարոն Ասատրյանը նշեց նաև, որ վերջին տարիներին հաշմանդամության ոլորտում մեծ դրական տեղաշարժ կա և իր գոհունակությունը հայտնեց Հանձնաժողովի բոլոր անդամներից և գործընկերներից, քանի որ դա հնարավոր չէ իրականացնել միայն պետական կառավարման մարմինների միջոցով և անհրաժեշտ է ակտիվ համագործակցություն բոլոր շահագրգիռ կողմերի հետ:

Պարոն Ասատրյանը անդրադարձավ նաև այն փաստին, որ հասարակության մեջ աստիճանաբար ամրապնդվում է այն, որ հաշմանդամություն ունեցող անձը հասարակության լիիրավ անդամ է, և պարզապես պետք է ապահովվել նրանց

համար հավասար հնարավորություններ կյանքի բոլոր ոլորտներում:Կարևորվեց հատկապես հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման համար արդեն կատարված քայլերը և կարծիք հայտնեց, որ պետք է հաշմանդամության ոլորտի առջև ծառացած խնդիրները ստանան համակարգային լուծում՝ այսինքն խնդիրների լուծման մեխանիզմները պետք է ներդրված լինեն բոլոր պետական մարմինների գործունեության հիմքում: Այս առումով ՀՀ վարչապետի կողմից 2015 թվականի մարտի 6-ի նիստի ընթացքում տրված հանձնարարականը ըստ էության նաև հաշմանդամության ոլորտի առջև ծառացած խնդիրների լուծման ինստիտուցիանալացման է միտված՝ մասնավորապես քաղաքաշինական ոլորոտում կապված մատչելի միջավայրի ապահովման հետ: Պարոն Ա. Ասատրյանը նշեց, որ հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի պայմանների ապահովումը աշխատատար և մեծ ֆինանսական միջոցներ պահանջող խնդիր է և որպեսզի այն համակարգային լուծում ստանա անհրաժեշտ է ապահովել դրա օրենսդրական և իրավական հիքերը, որն ամրագրվել է ՀՀ վարչապետի համապատասխան հանձնարարականներում:

Պարոն Ա. Ասատրյանը շնորհակալություն հայտնեց Հաձնաժողովի անդամներին ակտիվ համագործակցության համար և անցում կատարեց օրակարգային հարցերի քննարկմանը:

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության հաշմանդամների հիմնահարցերի բաժնի պետ Ա.Հակոբյանը: Զեկուցողը նշեց, որ համաձայն ՀՀ վարչապետի 2008 թվականի փետրվարի 25-ի N 98-Ն որոշման Հավելված 1-ի 5-րդ հոդվածի 2-րդ կետի Հանձնաժողովը քննարկում է հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության տարեկան ծրագրի նախագիծը և տալիս եզրակացություն՝ այն Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնելու համար, ինչը նախորդ տարիներին արվել է հեռակա նիստերի գումարման կարգով՝ էլեկտրոնային փոստերի միջոցով: Սակայն այս տարի ձևաչափը փոխվել է՝ հաշվի առնելով Հանձնաժողովի անդամների առաջարկությունը՝ նիստի ընթացքում քննարկելու տարեկան ծրագիրը:

Ա. Հակոբյանը ներկայացրեց տարեկան ծրագրի կազմման ընթացքը, նպատակը, կառուցվածքը, միջոցառումների խմբավորման ձևաչափը և ընդհանուր տեղեկատվություն միջոցառումների վերաբերյալ: Տիկին Հակոբյանը կարևորեց այն փաստը, որ յուրաքանչյուր տարի տարեկան ծրագրում ընդգրկված միջոցառումներն ավելանում են և դրական զարգացում է ապրում ոչ միայն միջոցառումների քանակական կողմը, այլ նաև որակականը: Նա կարևորեց նաև սոցիալական գործընկերության գաղափարը, որ լավագույնս է արտահայտվում ոլորտի լիազոր մարմնի՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և շահագրգիռ հասարակական կազմակերպությունների միջև:

Հանձնաժողովի անդամ <<Ունիսոն >> ՀԿ-ի նախագահ պարոն Ա. Ալավերդյանն առաջարկեց տարեկան ծրագրի բոլոր միջոցառումները առանձին չքննարկել, այլ տրամադրել 7 օր՝ տարեկան ծրագիրը մանրամասն ուսումնասիրելու և համապատասխան առաջարկություններ ներակայացնելու համար:

«Հաշմանդամություն ունեցող անձանց շահերի պաշտպանության ազգային դաշինք» իրավաբանական անձանց միության նախագահ Զ. Բաթոյանը հանդես եկավ հաշմանդամություն ունեցող աշխատողների կուտակային կենսաթոշակային համակարգ մտնելուն առնչվող հարցադրումով: Նա մտահոգություն հայտնեց, արդյոք հաշվի է առնվել միջազգային փորձը, ինչպես նաև բոլոր այն ռիսկերը և այն անհավասար պայմանները, որոնք ունեն հաշմանդամություն ունեցող աշխատողները կուտակային կենսաթոշակային համակարգ մտնելիս և արդյոք այդ հաշմանդամության հարցը քննարկման առարկա դարձել է կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման մասին որոշում կայացնելիս:

Հանձանաժողովի նախագահ պարոն Ա. Ասատրյան ի պատասխան տիկին Բաթոյանի հարցադրմանը նշեց, որ իհարկե կենսաթոշակային բարեփոխումները նախագծելիս հաշվի են առնվել նաև հաշմանդամության հիմքով կենսաթոշակների վճարման համակարգերի առանձնահատկությունները, և պետք է հաշվի առնել, որ հաշմանդամություն ունեցող անձն էլ պետք է մաս կազմի կենսաթոշակային համակարգի, որպեսզի ապագայում հնարավորություն ունենա ապահովված լինել բարեկեցիկ ծերությամբ:

Որոշվեց՝

1. Զ. Բաթոյանի կողմից բարձրացրած հարցերը համապատասխան ձևակերպմամբ ներկայացնել նախարարության կենսաթոշակային վարչություն և անհրաժեշտության դեպքում անցկացնել քննարկում տվյալ խնդիրների վերաբերյալ:
2. Մեկշաբաթյա ժամկետում էլեկտրոնային փոստի միջոցով 2016 թվականի տարեկան ծրագրի վերաբերյալ առաջարկությունները ներկայացնելու նախարարության հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչություն, որն էլ կամփոփի դրանք և վերջնական նախագիծը սահմանված կարգով կդնի շրջանառության մեջ:

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ զեկուցեց ԱՄՆ ՄԶԳ կենսաթոշակային քաղաքականության թիմի ղեկավար Ա. Մանուկյանը, ով ներկայացրեց ՀՀ ԱՍՀ նախարարի 2015թ-ի հուվարի 22-ի 9-Ա/1 հրամանով ստեղծված Սոցիալական ձեռնարկությունների իրավական կարգավիճակի հստակեցման ուսումնասիրություն իրականացնող աշխատանքային խմբի կատարած աշխատանքները:

Զեկուցողը, ներկայացնելով սոցիալական ձեռնարկությունների գաղափարը և եվրոպական երկրների օրենսդրության հիման վրա արված ուսումնասիրությունները, նշեց, որ <<Սոցիալական ձեռնարկություն>> հասկացությունը Հայաստանում դեռևս

կոնցեպտուալ հասկացություն է և օրենսդրությամբ սահմանված չէ: Ա. Մանուկյանն իր զեկույցում անդրադարձավ սոցիալական ձեռնարկությունների 2 մոդելների՝ 1-ին մոդելը ավելի լայն գործունեության ոլորտով՝ երբ չեն դիտարկվում հաշմանդամություն ունեցող անձի կամ աշխատաշուկայում անմրցունակ խմբերի մասնակցությամբ ձեռնարկությունները, այլ զուտ այս կամ այն կազմակերպչաիրավական ձևով ձեռնարկության ստացած եկամուտների վերաբաշխում է կատարվում վերը նշված սոցիալական խմբերի խնդիրների լուծման համար, և 2-րդ մոդելը, որն ուղղված է հենց զբաղվածության խթանմանը: Այս տարբերակը կբերի հարկային արտոնություններ տրամադրելուն, կիստակեցվեն այդպիսի ձեռնարկություններում աշխատող հաշմանդամություն ունեցող անձանց թվաքանակը և կազմակերպչաիրավական ձևերը:

Հանձանաժողովի նախագահ պարոն Ա. Ասատրյանը նշեց, որ պետք է հստակ ձևակերպել նպատակը և դրանից բխող մեխանիզմների սահմանները:

Զեկույցի վերաբերյալ արտահայտվեց Հանձնաժողովի նիստին հրավիրված և վերը նշված աշխատանաքային խմբի անդամ «Սեյվ դը Չիլդրեն» միջազգային կազմակերպության ներկայացուցիչ, «LIFE» ծրագրի տնօրեն տիկին Ջ. Սարգիզովան, ով նշեց, որ զբաղվածության խթանման «LIFE» ծրագիրը հիմնական հաջողությունները գրանցել է այսպես կոչված սոցիալական ձեռնարկությունների ստեղծման շնորհիվ, որոնք կարողանում են ապահովել կայուն զբաղվածություն: Տիկին Սարգիզովան նշեց, որ նպատակահարմար է գտնում հենց 2-րդ՝ զբաղվածության խթանման մոդելի ներդրումը:

Զեկույցի վերաբերյալ արտահայտվեց նաև Հանձնաժողովի անդամ «Ունիսոն» ՀԿ-ի նախագահ պարոն Ա. Ալավերդյանը՝ նշելով, որ սոցիալական ձեռնարկությունների գաղափարի մեջ պետք է սահմանվեն այնպիսի մեխանիզմներ, որոնք կխթանեն սոցիալական ծրագրերը նպաստող բիզնեսի զարգացմանը, սակայն պետության մասնակցային մասը այսպիսի ձեռնարկություններում չպետք է լինի կաշկանդող, այլ պետք է տրամադրվեն արտոնություններ, որպեսզի նմանատիպ սոցիալական բիզնես-նախագծերը չտապալվեն:

Նշված հարցի վերաբերյալ կարծիք հայտնեց նաև Հանձնաժողովի անդամ ՀՀ ԱՍՀ նախարարի տեղակալ տիկին Ջ.Բաղդասարյանը, ով նշեց, որ աշխատանքային խմբի հիմնական նպատակը այնպիսի մոդելի մշակումն է, որը կխթանի հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածությունը և եթե լինի հանձնաժողովի կողմից հստակ որոշում առաջարկվող մոդելներից որևէ մեկի վերաբերյալ, ապա սոցիալական ձեռնարկութունների վերաբերյալ դրույթը պետք է սահմանվի ՀՀ ԱԺ-ում գտնվող «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագծում:

«Փրկություն» հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոնի ղեկավար տիկին Ա. Աբրահամյանը նշեց, որ նպատակահարմար կլիներ սոցիալական ձեռնարկություններում խթանվեր ոչ միայն հաշմանդամություն ունեցող

անձանց, այլ նաև նրանց ընտանիքի անդամների զբաղվածությունը և խնդրեց աշխատանքային խմբին հաշվի առնել նաև այդ առաջարկը:

Ամփոփելով օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ քննարկումները՝ Հանձանաժողովի նախագահ պարոն Ա. Ասատրյանը հանձնարարեց

1. շարունակել ուսումնասիրությունները այս հարցի առնչությամբ՝ ներկայացնելով սոցիալական ձեռնարկությունների ստեղծման հետ կապված հստակ նպատակները և առաջարկվող մոդելներից յուրաքանչյուրի դեպքում արդյունավետության կանխատեսումներն ու հնարավոր ռիսկերի գնահատումը:

Օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ զեկուցեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության հաշմանդամների հիմնահարցերի բաժնի պետ Ա.Հակոբյանը:

Զեկուցողը, ներկայացնելով բժշկասոցիալական փորձաքննության գործընթացում Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների դասակարգման մոտեցումների ներդրման ուղղությամբ իրականացվող աշխատանքները, տեղեկացրեց, որ դրանք կատարվում են հաշմանդամության ոլորտում իրականացվող բարեփոխումների շրջանակներում և այդ նոր մոտեցումների ներդրումը թույլ կտա հստակ սահմանել հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները և դրանց հիման վրա տրամադրել հենց այդ կարիքների համապատասխան ծառայություններ: Ա. Հակոբյանը զեկուցեց ս.թ. փետրվար-մարտ ամիսներին իրականացված ռետրոսպեկտիվ փորձարկման ընթացքի և արդյունքների մասին, տեղեկացրեց նաև առաջիկայում կայանալիք պրոսպեկտիվ փորձարկման ուղղությամբ կատարված աշխատանքների մասին:

Զեկուցողին հարց ուղղեց Հանձնաժողովի նիստին հրավիրված «Փրկություն» հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոնի ղեկավար տիկին Ա. Աբրահամյանը, ում հետաքրքրում էր, արդյոք ռետրոսպեկտիվ փորձարկման ժամանակ եղել են մտավոր և հոգեկան խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձինք:

Ա. Հակոբյանը նշեց, որ կատարված փորձաքննության ընթացքում 39 անձանցից 14-ը եղել են մտավոր և հոգեկան խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձինք:

Հանձնաժողովի նախագահ պարոն Ա. Ասատրյանն առաջարկեց

1. պրոսպեկտիվ փորձարկումը ավարտելուց հետո ամփոփ տեղեկատվություն ներկայացնել նաև իրականացված գործընթացի վերաբերյալ :

Օրակարգի չորրորդ հարցի վերաբերյալ զեկույցով հանդես եկավ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության պետ պարոն Ա. Կեսոյանը:

Ներկայացնելով «Հայաստանի Հանրապետությունում 2016թ հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորությունների տարի հայտարարելու և հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորությունների տարվա կապակցությամբ անցկացվող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծը՝ պարոն Կեսոյանը նշեց, որ ս.թ. մարտի 6-ին ՀՀ վարչապետի մոտ տեղի ունեցած Հանձնաժողովի նիստի արդյունքում ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանը հանձնարարական է տվել քննարկել 2016 թվականը հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորությունների տարի հայտարարելու հարցը և սահմանված կարգով ՀՀ վարչապետին ներկայացնել առաջարկություն:

Զեկուցողը նշեց նաև, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և ոլորտի շահագրգիռ պետական, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական և միջազգային կազմակերպությունների համատեղ քննարկման ու համապատասխան առաջարկությունների արդյունքում մշակվել է ՀՀ կառավարության նախագիծը և սահմանված կարգով դրվել է շրջանառության մեջ:

Պարոն Ա. Կեսոյանը կարևորեց նաև այն հանգամանքը, որ այս նախագծով հանձնարարվում է Հայաստանի Հանրապետության մարզպետներին և առաջարկվում Երևանի քաղաքապետին հաստատել Հայաստանի Հանրապետության մարզերում և Երևան քաղաքում հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորությունների տարվա կապակցությամբ իրականացվելիք տեղական միջոցառումների ծրագրեր:

Զեկույցի մասին արտահայտվեց ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի հանրակրթության վարչության նախադպրոցական և միջին կրթության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Մուրադյանը, ով նշեց, որ նախագծի որոշ դրույթներ հստակեցման կարիք ունեն և լրացուցիչ քննարկման կարիք կա:

Հանձնաժողովի նախագահը պարոն Ա. Ասատրյանը առաջարկեց՝

1. 3-օրյա ժամկետում առաջարկներ ներկայացնել զեկուցվող հարցի վերաբերյալ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչություն:

Հանձնաժողովի նիստին ընթացքում քննարկվեցին նաև այլ հարցեր:

Հանձնաժողովի անդամ <<Ունիսոն>> ՀԿ-ի նախագահ պարոն Ա. Ալավերդյանը մտահոգություն հայտնեց, որ վերջին շրջանում սոցցանցերում և այլ լրատվամիջոցներում լինում են այնպիսի հրապարակումներ, որտեղ հաշմանդամություն ունեցող անձի առողջական վիճակից ելնելով կատարվում են կասկածելի դրամահավաքներ՝ իբր <<սայլակին գամված անձի առողջության վերականգման համար>>: Պարոն Ալավերդյանը նշեց նաև, որ շատ ուրախալի և ընդունելի է, որ մեր հասարակությունում կան մարդասիրական միտումներով դրամահավաքներ, սակայն մեծ է մտավախությունը, որ դրանք կարող են սխալ

ուղիով գնալ և աջակցելու փոխարեն կնպաստեն <<դրամաշորթություն>> երևույթին՝ շահարկելով հաշմանդամություն ունեցող անձանց առողջական վիճակը և վերականգնումը:

Հանձնաժողովի նիստին հրավիրված «Հաշմանդամություն ունեցող անձանց շահերի պաշտպանության ազգային դաշինք» իրավաբանական անձանց միության նախագահ Զ. Բաթոյանը նույնպես կարևորեց պարոն Ալավերդյանի կողմից բարձրացրած հարցը, նշելով, որ հասարակության մոտ իրազեկման պակաս կա և շատ դեպքերում հասարակ քաղաքացին չի էլ հասկանում, որ կոնկրետ հիվանդության դեպքում լիարժեք բուժում կամ վերականգնումը հնարավոր չէ իրականացնել: Տիկին Բաթոյանը կարծիք հայտնեց, որ պետք է արձագանքել նմանատիպ երևույթներին, սակայն պետք է ընտրել արձագանքման այնպիսի տարբերակ, որը կբերի խնդրի լուծմանը:

Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միության նախագահ Հ. Աբրահամյանը կարծիք հայտնեց, որ եթե կան կասկածելի դրամահավաքային ակցիաներ, ապա անհրաժեշտ է դրա մասին հաղորդում տալ ՀՀ ոստիկանության համապատասխան ստորաբաժանում:

Հանձնաժողովի նախագահ պարոն Ա. Ասատրյանը կարևորեց մարդկային այդպիսի հումանիստական միտումները, որոնք ուղղված են հաշմանդամություն ունեցող անձին աջակցելուն և պետք է դրանք ըստ արժանվույն գնահատվեն և հասարակական և պետական կառույցների կողմից: Միևնույն ժամանակ կարևորելով Հանձնաժողովի անդամների կողմից բարձրացված հարցը՝ պարոն Ասատրյանը առաջարկեց,

1. աշխատանքային կարգով քննարկել հարցը Հանձնաժողովի բոլոր անդամների հետ և առաջարկել ընդունելի ձևաչափ կամ ձևակերպումներ, որի դեպքում Հանձնաժողովն իրավասու կլինի արձագանքելու այս խնդրին:

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ա.ԱՍԱՏՐՅԱՆ**

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ա.ԿԵՍՈՅԱՆ**